



ԴԵԿՏԵՄԲԵՐԸ ԵՆԿ-Ի ՅԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության դեկտեմբեր ամսվա անցուդարձի մասին:

«ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԳԱՅԻՆ ՕՐ-2018»

Ամիսը սկսվեց Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումների նախապատրաստական աշխատանքներով:

«Կամավորների միջազգային օր-2018» ծրագրի շրջանակում դեկտեմբերի 4-ին իրականացվեց միջոցառումների շարք. Կամավորության հնարավորությունների տոնավաճառ, (չ)կոնֆերանսների ձևաչափով աշխատարաններ, փորձի ներկայացումներ, կամավորների ելույթներ՝ հաջողության պատմությունների ներկայացում և մրցանակաբաշխություն՝ «Տարվա լավագույն կամավորական նախաձեռնություն» անվանակարգում: Օրն եզրափակվեց կամավորների համար պատրաստված ոչ ֆորմալ հավաքույթով:



«ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ » ՖՈՐՈՒՄ

Կամավորության միջազգային օրվան նվիրված միջոցառումները շարունակվեցին նաև դեկտեմբերի 5-ին «Կամավորության հեռանկարները Հայաստանում» ֆորումի անցկացմամբ, որի ընթացքում կազմվեցին աշխատանքային խմբեր և անցկացվեցին քննարկումներ «Կամավորական աշխատանքի օրենսդրական կարգավորումներ», «Կամավորական աշխատանքի համակարգում», «Կամավորական աշխատանքի շարժառիթներ և ակնկալիքներ» թեմաներով:



«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 2018»



Ուրախ ենք հայտարարել, որ դեկտեմբերի 13-ին ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից «Երիտասարդական մրցանակաբաշխություն 2018» ամենամյա միջոցառման շրջանակում «Տարվա լավագույն երիտասարդական աշխատող» տիտղոսը շնորհվեց Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանին:

ԵՆԿ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀՈՒՅՆՑԱՆԱԿԱՆ 10-ԱՄՅԱԿԸ



Դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ ԵՆԿ-ի հիմնադրման հոբելյանական 10ամյակին նվիրված միջոցառումը, որին ներկա էին պետական կառավարման մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների ու մեդիա ոլորտի ներկայացուցիչներ, կազմակերպության անդամներ ու շահառուներ:

Միջոցառման ընթացքում ամփոփվեց կազմակերպության գործունեության 10 տարիները՝ ներկայացվեցին կազմակերպության իրականացրած ծրագրերը և գործողությունները՝ ըստ ոլորտների: Տեղի ունեցավ նաև ԵՆԿ-ին նվիրված «Youth Power» երգի արեմիերան:

Ամփոփելով 2018 թվականը՝ ԵՆԿ-ն հանձնեց ավանդական դարձած տիտղոսներն ու շնորհակալագրերը գործընկեր կառույցներին, պետական, մեդիա և հասարակական ոլորտի ներկայացուցիչներին: Հանձնվեցին նաև «Տարվա անդամ», «Տարվա աշխատակազմի անդամ» և «ԵՆԿ բարեկամ» տիտղոսները: Իսկ ԵՆԿ-ն, ի դեմս նախագահ Արթուր Նաջարյանի, պարգևատրվեց պատվոգրերով, շնորհակալագրերով և հուշանվերներով ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանի, Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանի և Գյումրու համայնքապետ Սամվել Բալասանյանի անունից:

ՈՒՐԲԱԹՅՈՒՅԱ ՍՐՃԱՐԱՆ. ԱՄԱՆՈՐ



Դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ հերթական «Ուրբաթօրյա սրճարանս»՝ այս անգամ Սուրբ ծննդյան թեմայով, որի ընթացքում հյուրերը հատուկ ջերմ մթնոլորտում, խաղերի ու քուլիզների միջոցով բացահայտեցին Էստոնիայի, Սլովակիայի և Չեխիայի Սուրբ ծննդյան ավանդույթները և սովորույթները:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՈՐՏԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՑ ԶՆՆԱՐԿՈՒՄ .



Դեկտեմբերի 27-ին ԵՆԿ-ում անցկացվեց «Երիտասարդական ոլորտի ապագան անորոշ Է» խորագրով բաց քննարկում, որին հրավիրված էին Շիրակի մարզի երիտասարդներ, երիտասարդական աշխատողներ, փորձագետներ, մեդիա ներկայացուցիչներ, երիտասարդության հարցերով հետաքրքրված քաղաքացիներ:

Քննարկման դրդապատճառը կառավարության կողմից շրջանառության մեջ դրած «Կառավարության կառուցվածքի ու գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ անելու մասին նախագիծն էր, որով առաջարկվում է կրճատել նախարարությունների թիվը՝ դրանք 17-ից հասցնելով 12-ի, որոնցից ոչ մեկի մեջ երիտասարդության հարցերի բաղադրիչը ներառված չէ:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՅԵՏ



Այս ամիս Լյուքսեմբուրգում մեր թիմը մասնակցեց «Gender 2.0» միջազգային դասընթաց-հեքթեթոնին՝ թվային գործիքների և հմտությունների միջոցով կանանց հզորացման թեմայով:

Հայաստանից ծրագրին մասնակցում էին ԵՆԿ ծրագրի ղեկավար Վալյա Մարտիրոսյանը, ԵՆԿ անդամ Հայարփի Պողոսյանը և ԵՆԿ Միջազգային խորհրդի անդամ Էսմարիդա Պողոսյանը:



Սլովակիայում անցկացվեց «TRAINBOW» խորագիրը կրող «Էրազմուս+» միջազգային դասընթացը՝ երիտասարդական աշխատանքում կրթական գործունեության կազմակերպման թեմայով:

Հայաստանից ծրագրին մասնակցում էին ԵՆԿ ադմինիստրատիվ օգնական Աննա Վարդանյանը, ԵՆԿ անգլերենի ակումբավար Էմիլյա Եգանյանը և Դասավանդիչ Հայաստան կրթական հիմնադրամի առաջնորդության զարգացման ղեկավար Մանուկ Խաչատրյանը:

Փետրվարի 6-13-ը Վրաստանում անցկացվելու է «Ծրագրի նախագծում ու կառավարում» թեմայով միջազգային դասընթաց: Դիմումների ընդունման վերջնաժամկետն ավարտվել է: Ընտրված մասնակիցների մասին կտեղեկացնենք ավելի ուշ:

Հաջորդ միջազգային դասընթացը, որն անցկացվելու է, կրկին Վրաստանում է, այս անգամ Զոբուլեթիում՝ փետրվարի 5-13-ը՝ իմպրովիզացիայի և ձեռնարկատիրական մտածողության վերաբերյալ: Դիմելու վերջնաժամկետը դեկտեմբերի 22-ն էր, ընտրված մասնակիցների մասին դեռ կտեղեկացնենք:



Հրանտ Դինք հիմնադրամի և ԵՆԿ ՀԿ-ի կողմից իրականացվող Հայաստան-Թուրքիա երկխոսության ծրագրերի շրջանակներում ս/թ նոյեմբերի 22-ից 25-ը Հայաստան այցելեցին հանրային առողջապահության ոլորտի վեց ներկայացուցիչներ՝ ներառյալ համալսարանների դասախոսներ և դեկան:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ



Դեկտեմբերին մեզ էր միացել «Դեպի Հայք»-ի կամավոր Ֆեդերիկո Ավետիսյանը Արգենտինայից, ով անցկացնում էր տարբեր աշխատարաններ շրջակա միջավայրի թեմայով: Այս ամիս մեկնարկը տրվեց նոր ակումբի՝ «Իմպրովիզացիայի ակումբի», որը վարում էին ԵՆԿ ԵԿԾ կամավորներ Բերթ Ցապովն ու Մարտինա Հորնիչկովան: ԵՆԿ-ի կողմից կազմակերպած «Կամավորների միջազգային օրվա» ընթացքում կենտրոնի թիմը ներկայացրեց կենտրոնն ու կամավորական հնարավորությունները: Դեկտեմբերի 5-ին «Դեպի Հայքի» ավելի քան 40 կամավոր նախաձեռնել էր համայնքային ծրագիր, որի շրջանակներում մաքրեցին կենտրոնի բակը:

«Երիտասարդների տանն» անցկացվեց սեղանի ֆուտբոլի առաջին առաջնությունը, որը կազմակերպել էր ԵՆԿ միջազգային կամավոր Մարտինան: Հաղթողները ստացան նվերներ:

Այս ամիս ավարտվեց ռուսերենի ակումբը, որը վարում էր «Դեպի Հայքի» կամավոր Չարուհի Կարապետյանը: Ամենաակտիվ և պարտաճանաչ մասնակիցները ստացան իրենց վկայականները:

Կենտրոնի սաները պատրաստվեցին Նոր տարվան՝ զարդարելով կենտրոնը և պատրաստելով գեղեցիկ շնորհավորական բացիկներ:

Դեկտեմբերի 20-ին «Երիտասարդների տանն» ամփոփվեց տարին, երիտասարդները նշեցին նաև գալիք Ամանորը, փոխանակվեցին նվերներով: Պարզ դարձավ նաև կենտրոնի տարվա լավագույն երիտասարդը, ով պարգևատրվեց շնորհակալագրով:



Սիրով կպատասխանենք Ձեր հարցերին և կլսենք առաջարկությունները :)